ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— հունվարի 2024 թվականի №—-Ա

«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի նոյեմբերի 27-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության մասնակից Սասուն Ավետիսյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Անդրանիկ Ասատուրյանին վաճառքի գործարքի կնքմանը,

բ) Ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 27-ի և դեկտեմբերի 4-ի գրություններով դիմել է Հանձնաժողով և խնդրել համաձայնություն տալ Ընկերության մասնակից Դավիթ Միրզայանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Սասուն Ավետիսյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքի կնքմանը՝ ներկայացնելով 2023 թվականի մարտի 24-ին կնքված՝ Դավիթ Միրզայանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Սասուն Ավետիսյանին նվիրատվությամբ հանձնման պայմանագրի պատճենը,

գ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի №ՍԱ/34.2-Մ2-8/4608-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի դեկտեմբերի 27-ի №01/11.1/12224-2023 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից առանց Հանձնաժողովի համաձայնության 2023 թվականի մարտի 24-ին կատարված Ընկերության մասնակցի

փոփոխության, ինչպես նաև Ընկերության մասնակցի նախատեսվող փոփոխությանը համաձայնություն ստանալու հայտերի (այսուհետ՝ Հայտեր) վերաբերյալ իր իրավասությունների շրջանակում առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով նաև Ընկերության մասնակցի նախատեսվող փոփոխության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը: Պարզվել է նաև, որ Դավիթ Միրզայանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Սասուն Ավետիսյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքը Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել է 2023 թվականի մարտի 24-ին՝ Օրենքի 14-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված՝ օրենքի ուժով այն առ ոչինչ է: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացնելով համապատասխան հայտը և բաժնեմասի նվիրատվության վերաբերյալ պայմանագիրը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝
    1) Ընկերության մասնակից Դավիթ Միրզայանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Սասուն Ավետիսյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքի կնքմանը,

2) Ընկերության մասնակից Սասուն Ավետիսյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասի Անդրանիկ Ասատուրյանին վաճառքի գործարքի կնքմանը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը.
   2) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընդունել ի գիտություն, որ 2023 թվականի մարտի 24-ին կնքված՝ Դավիթ Միրզայանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Սասուն Ավետիսյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքը կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունվարի 2024 թ.